02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

6 (1405) • 15 փետրվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Լավագույն պարեկային ոստիկանը

Ոստիկանության հատուկ հանձնաժողովի որոշմամբ՝ 2018 թվականի լավագույն պարեկային ոստիկան ճանաչվեց ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի ոստիկան Տիգրան Սարգսյանը:

Տիգրան Սարգսյանի կատարած աշխատանքը ոստիկանության հատուկ հանձնաժողովի դատին ներկայացրել են՝ հաշվի առնելով նաեւ նրա մարդկային որակները. քաղաքացիների հետ շփումներում հարգալից է, երբեւէ բողոքներ չեն եղել:

Ոստիկանության ենթասպա Տիգրան Սարգսյանը ոստիկանության համակարգում է 2004 թվականից: Ծառայությունը սկսել է պետական պահպանության գլխավոր վարչությունում, ապա տեղափոխվել է արտաքին ծառայության ոլորտ:

2014 թվականից ծառայում է պարեկապահակետային ծառայության գնդի 5-րդ վաշտում:

2016 թվականից ջոկի հրամանատար է: Ծառայության արդյունավետության գրավականը համարում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը: Ասում է, որ գործընկերները նաեւ ընկերներ են՝ օգնության պատրաստ ոչ միայն ծառայության մեջ, այլեւ ծառայությունից դուրս:

էջ 2

Հետախուզվում էր սպանության համար

Փետրվարի լույս 12-ի գիշերը Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, Վանաձորի Շիրակի խճուղու տներից մեկում հայտնաբերել ու ձերբակալել են Աղասի Հովհաննիսյանին: 29-ամյա Հովհաննիսյանը հունվարի 22-ից ոստիկանության Սպիտակի բաժնի կողմից հետախուզվում էր մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանության մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

Դեպքը տեղի էր ունեցել հունվարի 15-ին, Սպիտակում: Ժամը 13-ն անց 20-ի սահմաններում «Սպիտակ» բժշկական կենտրոնից ոստիկանության տարածքային ստորաբաժանում էին հաղորդել, որ 41-ամյա մի տղամարդ է բուժհաստատություն տեղափոխվել: Ախտորոշվել էր որովայնի հրազենային վիրավորում, ագոնալ վիճակ, ականջների ամպուտացիա եւ կտրած վերք: Հոսպիտալացված Գարուշ Մարությանը, գիտակցության չգալով, մահացել էր: Նույն օրը հրազենային վնասվածքով մեկ այլ տղամարդու հիվանդանոց տեղափոխվելու վերաբերյալ ահազանգ էր ստացվել նաեւ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժին: Խոսքը «Վանաձոր» բժշկական կենտրոնում հոսպիտալացված 31-ամյա Կամո Քալաշյանի մասին էր:

Ոստիկանության աշխատակիցները նախ պարզեցին, որ դեպքը տեղի էր ունեցել Սպիտակ քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի ԱՊՊԱ գրասենյակներից մեկում: Շուտով հայտնի դարձավ, որ տղամարդիկ հիվանդանոցներ էին տեղափոխվել նույն վայրից: Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները գրասենյակն ու հարակից տարածքը մանրակրկիտ զննել էին, հայտնաբերել՝ արնանման հետքեր, հրազենի գնդակ եւ այլն:

Հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների շնորհիվ իրավապահները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ, որոնց հիմնավորման արդյունքում հրազենային վիրավորումով «Վանաձոր» բժշկական կենտրոնում բուժում ստացող Կամո Քալաշյանը սպանություն կատարելու կասկածանքով ձերբակալվեց: Հետագայում նրան մեղադրանք էր առաջադրվել եւ խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը:

էջ 2

Հանրավոր արնահեղությունը կանխվեց

Փետրվարի 8-ի երեկոյան Էրեբունու ոստիկանության քրեական հետախույզների օրեր տեւած ծավալուն եւ բազմակողմանի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ պարեկապահակետային գնդի 3-րդ հատուկ գումարտակի ծառայողների համագործակցությամբ, Էրեբունի վարչական շրջանի տարբեր հատվածներից եւ Մաշտոցի պողոտայից Էրեբունու բաժին բերման ենթարկվեցին ութ անձինք:

Հունվարի 21-ին երկու անձ մարմնական տարբեր վնասվածքներով, այդ թվում՝ կտրած-ծակած վերքերով, տեղափոխվել էին «Էրեբունի» բժշկական կենտրոն: Նյութերի նախապատրաստման ընթացքում տեղեկություններ էին ստացվել, որ հունվարի 20-ին, ժամը 23-ի սահմաններում, մի խումբ անձինք բիլիարդի ակումբում կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, ինչը զուգորդվել էր ակումբի գույքը վնասելով, սուր կտրող-ծակող առարկա եւ ատրճանակ գործադրելով:

Նույն օրը հարուցվել էր քրեական գործ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, խուլիգանության եւ ապօրինի զենք կրելու հատկանիշներով:

էջ 3

Չափահաս ու անչափահասները

Ստիպված էին խոստովանել՝ մատնանշելով հանցանքի վայրերն ու, ամենակարեւորը, «ուսուցչին»:

էջ 3

Օրինահարգության խնդիր

Մտածեց՝ վրաերթ կատարած մեքենան կգրանցվի որպես անհայտ մակնիշի ու պետհամարանիշի:

էջ 6

«Մարտկոցի գործ» էին անում

Շենքերի բակերում կայանված մեքենաներից գողացել էին վաթսունհինգ մարտկոց:

էջ 6

Հայտնաբերվեցին կեղծ դոլար իրացնելիս

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Հայաստանում գործող բանկերից մեկի բանկոմատներով կեղծ թղթադրամներ են իրացվում: Մասնավորապես, 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամներ են ներմուծել բանկոմատ՝ փոխարենը ստանալով հայկական դրամ: Այլ կերպ ասած՝ արտարժույթի փոխանակման գործարք են կատարել:

Ոստիկանության ծառայողները, օպերատիվ տվյալներ ստանալուն պես, ձեռնամուխ եղան հետախուզական միջոցառումների, որոնց արդյունքում օպերատիվ տեսադաշտում հայտնվեցին երկու երիտասարդներ:

էջ 2

Թմրաշղթան բացահայտվեց

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները տեղեկություններ էին ստացել, որ Իրանի եւ Հայաստանի մի խումբ քաղաքացիներ ձեւավորել են հանցավոր խումբ եւ Իրանից թմրամիջոց են ներկրում Հայաստան՝ զբաղվելով նաեւ դրանց իրացմամբ: Նրանք հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ:

Այսպես, փետրվարի 9-ին մայրաքաղաքի Ջանիբեկյան փողոցում հայտնաբերվեց եւ մեքենայով հանդերձ, ոստիկանության Մաշտոցի բաժին բերման ենթարկվեց Երեւանի բնակիչ Աշոտ Շահբազյանը: Խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեցին ափիոն եւ մեթամֆետամին թմրամիջոցների զանգվածներ: Բերման ենթարկվածը մեքենայից իրավապահներին ներկայացրեց նաեւ հերոինի ու մարիխուանայի զանգվածներ:

էջ 7

Զոհի չդառնալու վճռականություն

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը անձի ազատության, պատվի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների շարքից է:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման համար, 132.2 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում երեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման համար: 132.3 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից օգտվելու համար:

էջ 7

Լավագույն պարեկային ոստիկանը

Սկիզբը՝ էջ 1

Շենգավիթ վարչական տարածքում գերազանց հասարակական կարգ պահպանելուց բացի, Տիգրան Սարգսյանը ներդրում ունի նաեւ հանցավորության դեմ պայքարի գործում: 2018 թվականին բացահայտել է տասը հանցագործություն, այդ թվում՝ սպանության սպառնալիքի, մարմնական վնասվածք հասցնելու, ծեծի ու գողության դեպքեր, նաեւ հայտնաբերել է թմրամիջոցներ: Ոստիկանության Շենգավիթի բաժին բերման է ենթարկել տարբեր իրավախախտումներ կատարած 177 անձի:

Տիգրան Սարգսյանը պարեկայինի աշխատանքը համարում է բարդ ու հետաքրքիր: Նրա խոսքով՝ պարեկայինը պետք է չափազանց զգոն եւ արագ կողմնորոշվող լինի: Վստահեցնում է՝ ծառայությունը չսիրեր, վաղուց այլ աշխատանքի կանցներ:

Տիգրան Սարգսյանն իր լավագույն պարգեւը համարում է ընտանիքը՝ ամենաջերմ անկյունն աշխարհում: Որդին, հոր օրինակով ոգեշնչված, սիրում է համազգեստը, բայց նպատակադրվել է լավ տնտեսագետ դառնալ: Դուստրը առաջին քայլերն է անում երաժշտության ասպարեզում: Իրենց հոգատար հորով ավելի են հպարտացել, երբ տեղեկացել են, որ նա ճանաչվել է լավագույնը:

Այսքանը 2018 թվականի լավագույն պարեկապահակետային ծառայող, ոստիկանության ենթասպա Տիգրան Սարգսյանի մասին:

Մ. Ս.

Խուզարկություններ Ծիրակի մարզում

Ոստիկանության Ախուրյանի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Ախուրիկ գյուղի բնակիչ Ռուստամ Կ.-ն տանը ապօրինի զենք-զինամթերք եւ թմրանյութ է պահում: Հարուցված քրեական գործի շրջանակներում փետրվարի 8-ին Ռուստամ Կ.-ի տանը եւ հարակից տարածքներում կատարված խուզարկությամբ՝ նկուղում հայտնաբերվեցին ինքնաձիգի զսպանակներ, սվին-դանակ, սվին-դանակի բռնակներ, զարկանածգանային մեխանիզներ, զարկանածգանային մեխանիզմի զսպանակներ, գազամխոցներ, ինքնաձիգի 60-ից ավելի դետալներ եւ մեկ զրահաբաճկոն:

Ռուստամ Կ.-ն հայտնել է, որ զինամթերքը ձեռք է բերել 1990 թ. խորհրդային բանակում ծառայելու ժամանակ:

Ստացված տեղեկություններն իրացնելով, մեկ այլ քրեական գործի շրջանակներում, Ախուրյանի ոստիկանները խուզարկություն իրականացրին նաեւ Մայիսյան գյուղի բնակիչ Անդրանիկ Բ.-ի տանը: Նկուղում պոլիէթիլենային երկու պարկերի մեջ հայտնաբերվեց 430 գրամ կանեփի չորացրած զանգված, կանեփի սերմնահատիկներ, տանիքից՝ կանեփի կանաչ զանգված, խոհանոցից կանեփանման բույսի սերմեր:

Ոստիկանները ննջասենյակից հայտնաբերեցին նաեւ տարբեր չափսերի դանակներ, կրակված եւ չկրակված որսորդական փամփուշտներ, «Ֆաբարմ» տիպի 12 մմ տրամաչափի որսորդական օդաճնշիչ զենք, գազային ատրճանակ, օդաճնշիչ ատրճանակի գնդանման փամփուշտներ:

Անդրանիկ Բ.-ն հայտնեց, որ բուսական զանգվածները թմրամիջոց են, պատրաստել է վայրի աճած կանեփի թփերից՝ իր օգտագործման համար:

Փետրվարի 8-ին խուզարկություն կատարվեց նաեւ Ազատան գյուղի հյուրանոցային համալիրում: Առանձնասենյակներից մեկում հայտնաբերվեցին առանց տուփերի ու պիտակի 43 կանաչ եւ 2 սպիտակ դեղահաբեր, իսկ նկուղում՝ էլեկտրական կշեռք, հողով լցված 336 դույլերում՝ կանեփանման բույսի ծիլեր ու ցողուններ:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Գրպանահատությունները բացահայտվեցին

Ոստիկանությունը շարունակում է հետեւողական պայքարը գրպանահատության դեմ, յուրաքանչյուր նոր դեպք արձանագրելիս իրազեկում է հասարակությանը, ինչն ինքնին զգոնության կոչ է եւ կանխարգելիչ նկատառում ունի:

Փետրվարի 6-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները Քանաքեռի բնակիչ Հարություն Նազարեթյանին, գողություն կատարելու կասկածանքով, Բաղրամյան պողոտայից բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին:

Նազարեթյանը ավտոբուսում մի կնոջ պայուսակից դրամապանակ էր հափշտակել, որի մեջ եղել էին բանկային քարտ եւ փող: Ուղեւորուհին չէր նկատել նրան, բայց կասկածելի վարքը չէր վրիպել ոստիկանների աչքից՝ բռնել էին:

Նմանատիպ մի դեպք էլ հաջորդ օրը գրանցվեց Էրեբունու վարչական տարածքում:

Օգտվելով ավտոբուսի ծանրաբեռնվածությունից, Դավիթ Բեկի փողոցի բնակիչ Գրիգոր Ղավայանը ձեռքերի հմտությանն էր դիմել. մի տղամարդու գրպանից հափշտակել էր դրամապանակը, բայց գործն ավարտին հասցնել չէր կարողացել, Տիգրան Մեծի պողոտայում ավտոբուսից իջնելիս դարձյալ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները բռնել էին նրան ու բերման ենթարկել Էրեբունու բաժին:

Երկու դեպքում էլ ոստիկանները գողոնը ձեռքներին էին բռնել, կատարածը հերքելն անհնար էր:

Քաղաքացիներին խորհուրդ ենք տալիս հատկապես մարդաշատ վայրերում՝ լինի շուկա, տոնավաճառ, թե տրանսպորտ, պայուսակները, դրամապանակներն ու բջջային հեռախոսները պահել տեսադաշտում:

Հետախուզվում էր ապանության համար



Սկիզբը՝ էջ 1

Սպիտակի քննչական բաժնում հարուցված քրեական գործի շրջանակներում ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողներն իրականացրին տարաբնույթ հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ՝ բացահայտելով դեպքին առնչվող նոր փաստական հանգամանքներ: Պարզեցին, որ հիվանդանոցում մահացած տղամարդու ուղղությամբ, բացի կալանավորվածից, կրակել էր նաեւ Աղասի Հովհաննիսյանը: Դեպքից վեց օր անց՝ հունվարի 21-ին, նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում էր կայացվել: Հայտարարվել էր հետախուզում:

Ազգային անվտանգության ծառայողների կողմից հայտնաբերված Աղասի Հովհաննիսյանը ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին:

Առանձնապես ծանր հանցագործության օպերատիվ բացահայտումը, ինչպես եւ դեպքի մասնակիցների ինքնությունը պարզելն ու նրանց հայտնաբերումը օպերատիվ հետախուզական գործունեություն եւ նախաքննություն իրականացնող մարմինների՝ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության ու քննչական կոմիտեի արդյունավետ համագործակցության լավագույն դրվագներից է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտնաբերվեցին կեղծ դոլար իրացնելիս

Սկիզբը՝ էջ 1

Քրեական հետախույզները կազմակերպեցին դարանակալումներ՝ հետեւելով նրանց շարժին: Օրեր տեւած միջոցառումների արդյունքում երիտասարդները փաստով բռնվեցին:

Նոր Նորքի Նելսոն Ստեփանյան փողոցում տեղակայված բանկոմատով կեղծ 100 դոլարանոցը դրամով փոխանակելու գործարքից անմիջապես հետո ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները երիտասարդներին բռնեցին հենց դեպքի վայրում: Այդ ընթացքում նրանցից մեկը՝ Տիգրան Սարգսյանը, մոտը եղած դրամներն ու դոլարները նետել էր փողոց: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին երեք հատ 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամ եւ տարբեր արժեքներով դրամներ:

Երիտասարդները բերման ենթարկվեցին ոստիկանության Նոր Նորքի բաժին: Խուզարկությամբ Գեւորգ Ղազարյանի մոտ հայտնաբերվեց 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամ:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ Երեւանի բնակիչներ Տիգրան Սարգսյանն ու Գեւորգ Ղազարյանը ութ հատ կեղծ 100-դոլարանոց են իրացրել նաեւ փետրվարի 2-ին եւ 7-ին: Գործարքները կատարվել են դարձյալ նույն բանկի բանկոմատներով:

Հարուցվել է քրեական գործ:

Կվարտին չհասցրած՝ բռնվեցին

Փետրվարի 7-ի գիշերը ոստիկանության Տաշիրի բաժնի քրեական հետախույզները Շահումյան փողոցում շրջայց կատարելիս նկատել էին կապոցները ձեռքներին՝ «Մերսեդես» մակնիշի մեքենային մոտեցող երկու երիտասարդի: Ոստիկաններին տեսնելով՝ նրանք ձեռքի եղածը նետել էին ու փորձել փախչել, բայց իրավապահները հետապնդել, բռնել ու, գողության փորձ կատարելու կասկածանքով, բերման էին ենթարկել ոստիկանության Տաշիրի բաժին: Պարզվեց նրանց ինքնությունը՝ Սպիտակի բնակիչ Արգամ Հովսեփյան եւ վանաձորցի Արթուր Աթաբեկյան:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին նաեւ, որ կասկածյալները ժամը 3-ի սահմաններում, օգտվելով այն հանգամանքից, որ տանտերն արտասահմանում է, մուտք են գործել Խանջյան փողոցի առանձնատներից մեկն ու հափշտակել ոսկյա զարդեր, ժամացույց, թվային ֆոտոխցիկ, երաժշտական կենտրոն, հագուստ ու կենցաղային իրեր:

Երկուսն էլ նախկինում դատապարտվել էին կողոպուտի, գողության, գողության փորձի համար, սակայն պատիժը կրելուց հետո կրկին բռնել էին հանցավոր ուղին:

Հարուցվել է քրեական գործ:

Գ. Վ.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հնարավոր արնահեղությունը կանխվեց

Սկիզբը՝ էջ 1

Դեպքի վայրի եւ հարակից տարածքի զննությամբ հայտնաբերվեց եւ փորձաքննության ուղարկելու համար վերցվեց 12 մմ տրամաչափի փամփուշտ, նույն տրամաչափի՝ կրակված 3 պարկուճ եւ դանակ՝ արնանման հետքերով:

Նախաքննությամբ պարզվեց, որ հիվանդանոց տեղափոխվածները զարմիկներ են: Իրավապահներին տված ցուցմունքում նրանք հայտնել էին, որ հունվարի 20-ին տաքսիով գնացել էին բիլիարդի ակումբ, սակայն դեպքի հանգամանքների, շարժառիթների եւ մասնակիցների վերաբերյալ տեղեկություն չէին հայտնել: Ըստ տուժողների՝ չէին հիշում կամ չէին տեսել:

Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին հանցագործության կատարմանը առավել ակտիվ մասնակցած անձանց վերաբերյալ, որոնց հանցափաստի մեջ մերկացնելու վերաբերյալ առաջ քաշվեցին վարկածներ: Ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական եւ փնտրողական միջոցառումներ: Պարզվեցին հանցագործության դրդապատճառները: Օպերատիվ վերահսկողության տակ առնվեցին կատարվածի պատճառահետեւանքային բոլոր հնարավոր զարգացումները: Պարզվեց դեպքի ընթացքում տուժողներին մարմնական վնասվածքներ պատճառած անձանց ինքնությունը:

Էրեբունու քրեական հետախույզներին հաջողվեց ձեռք բերել օպերատիվ տեղեկություններ, որ հանցագործության գործիք ատրճանակը միջադեպի մասնակիցները պահում են իրենց մոտ: Բացի այդ, նրանց բնակության վայրերում պահվում է նաեւ այլ զենք-զինամթերք՝ երկու կողմերի միջեւ պայմանավորված, նախապես զինված, վրեժխնդրության նպատակով տեղի ունենալիք հանդիպման համար:

Ողջ ընթացքում պայթյունավտանգ իրավիճակը ոստիկանության պրոֆեսիոնալ ծառայողների վերահսկողության տակ էր:

Փետրվարի 8-ին, իրավիճակի կտրուկ սրմամբ պայմանավորված, արնահեղությունից խուսափելու նպատակով որոշվեց իրականացնել վնասազերծման օպերացիա՝ միաժամանակ խուզարկելով կասկածելի անձանց բնակության հասցեները: Ոստիկանություն բերման ենթարկված 8 անձանցից 4-ը՝ Նոր Արեշի բնակիչներ՝ 22-ամյա Ալբերտ Ժամհարյանը, եղբայրներ Արմեն եւ Արսեն Գաբրիելյանները եւ Կոնդի բնակիչ, 31-ամյա Տիգրան Մադոյանը կալանավորվեցին:

Արմեն Գաբրիելյանի վարած «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվեց «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգ՝ լիցքավորված 27 փամփուշտով, «Մակարով» ատրճանակ՝ լիցքավորված 8 փամփուշտով, 9 մմ տրամաչափի 18 եւ ինքնաձիգի 1 փամփուշտ, կաթուցիչ՝ դեղնականաչավուն զանգվածով: Արսեն Գաբրիելյանի անձնական խուզարկությամբ էլ հայտնաբերվեց 9 մմ տրամաչափի փամփուշտի կրակված 2 պարկուճ եւ 2 կաթուցիչ՝ մուգ շագանակագույն հեղուկով: Բնակարանների խուզարկությամբ հայտնաբերվեցին որսորդական հրացաններ, սառը զենք, մահակներ, զինամթերք ու կաթուցիչներ:

Հանգամանքները պարզվում են:

Նախաքննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Բռնկեցին ոստիկանությանը

Հունվարի սկզբներին ոստիկանության Կենտրոնական բաժնում հնչեցին գողությունների ահազանգեր: Թիրախում սրճարաններ, արագ սննդի կետեր ու խանութներ էին: Այդ հաստատություններից մեկի ֆեյսբուքյան էջում տեսագրություն հրապարակվեց՝ երեւում էր՝ ինչպես են երեք երիտասարդ բացում հաստատության դուռը, մտնում ու հափշտակում նոթբուք եւ դրամարկղ: Տեսագրությունում երեւում էր, որ այդ երիտասարդները փորձում են բացել նաեւ մեկ այլ սրճարանի դուռ, սակայն, իրենց կամքից անկախ հանգամանքներով, չեն կարողանում եւ հեռանում են:

Նույն ժամանակահատվածում ահազանգեր ստացվեցին նաեւ ոստիկանության այլ ստորաբաժանումներում: Հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության Կենտրոնական բաժնի օպերլիազորները տեղեկություն ստացան տեսագրություններում երեւացողներից մեկի ինքնության վերաբերյալ: Որոշ հիմնավորումներից հետո բաժին բերման ենթարկեցին 17-ամյա Հայկին: Նա ոստիկանության Կենտրոնական բաժնում բացատրություն տվեց, որ մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում 35 գողություն է արել: Բերման ենթարկվածն ու նախապատրաստված նյութերը ուղարկվեցին քննչական բաժին: Նախաքննական մարմինը որոշում կայացրեց նրան հանձնել ծնողի հսկողությանը:

Փետրվարի լույս 5-ի գիշերը Կենտրոն վարչական շրջանում մի քանի գողություն արձանագրվեց: Հանցագործությունները բացահայտելու եւ նորերը կանխելու նպատակով ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողներից օպերատիվ խմբեր ձեւավորվեցին, որոնք անցան ուժեղացված ծառայության:

Փետրվարի լույս 6-ի գիշերը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Մաշտոցի պողոտայի եւ Իսահակյան փողոցի խաչմերուկի գրենական պիտույքների խանութի դուռը: Օպերատիվ խումբը, ուժեղացված ծառայության շրջանակներում, Իսահակյան փողոցում բռնեց չորս երիտասարդներից մեկին:

Բերման ենթարկելիս անչափահասների գործերով ծառայողները կատարվածի մասին տեղեկացրին Կենտրոնում շրջող մյուս օպերատիվ խմբերին: Ոստիկանության ՊՊԳՎ Կենտրոնական պահպանության բաժնի ծառայողները մյուսներին էլ Պուշկինի-Փարպեցու փողոցների խաչմերուկում բռնեցին ու, գողության կասկածանքով, բերման ենթարկեցին:

Խոսքը Երեւանի բնակիչներ՝ 18-ամյա Գեղամ Հարությունյանի, 17-ամյա Գոռի եւ 17-ամյա Հայկի մասին է: Ի դեպ, Հայկին էր նախաքննական մարմինը հանձնել ծնողի հսկողությանը:

Դեպքերի հանգամանքները քննությամբ պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Չափահաս-ու անչափահասները

Արթուր Պետրոսյանն ու Արման Սարգսյանը մայրաքաղաքի դպրոցներից մեկում են սովորում, եթե, իհարկե, կարելի է նրանց դեպքում սովորել բառն օգտագործել: Ու քանի որ սովորելու վրա ընդհանրապես ժամանակ չեն կորցնում ու ժամանակը վատնում են փողոցում, փողոցն էլ տիրություն արեց նրանց: Տվյալ դեպքում փողոցն ասոցացվում է գողությունների համար նախկինում մի քանի անգամ դատապարտված Հայկ Մխիթարյանի հետ:

42-ամյա Հայկ Մխիթարյանը պատանիների համար «հեղինակություն» է, այլապես նրա հանցակիցը չէին դառնա: Բարեբախտաբար, «գործընկերությունը» կարճ տեւեց... քրեական հետախույզների պատճառով: Հասցրին ընդամենը երեք «գործ» գլուխ բերել:

Առաջինը Նոր Նորքի 7-րդ զանգվածում էր: Հայկ Մխիթարյանի հանձնարարությամբ՝ շենքերից մեկի առաջին հարկի բնակարանից գողացան ոսկյա զարդեր ու համակարգիչ: Դա հունվարի 2-ին էր, իսկ գողության ահազանգը ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հունվարի 8-ին ստացվեց, երբ քաղաքից բացակայող տանտերերը վերադարձան ու հայտնաբերեցին կորուստը:

Հաջորդ գողությունը Անդրանիկի փողոցում էր: Գիշերը Հայկը նրանց մենակ չքողեց. հեռվից հսկեց: Գողացան շենքերից մեկի բակում կայանած «Մերսեդես»-ի կողային հայելիները, սրահից՝ ձայնարկիչն ու պլանշետ:

Երկու օր անց «գործուղվեցին» Դավիթաշեն: Հայկի «հավաքածուի» բանալիներից մեկով բացեցին շենքերից մեկի 3-րդ հարկի անլույս բնակարանի դուռն ու գողացան համակարգիչներ, ոսկյա զարդեր, հարյուր քսան հազար դրամ եւ երկու հարյուր լարի:

Այսքանը. այլ «գործ» չհասցրին: Հայտնվեցին քրեական հետախույզների ու անչափահասների գործերով ծառայողների տեսադաշտում, իսկ հետո՝ ոստիկանությունում:

Խոստովանեցին՝ մատնանշելով հանցանքի վայրերն ու, ամենակարեւորը, «ուսուցչին»:

Հայկ Մխիթարյանը հայտնաբերվեց էջմիածնում ու բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Ամիսներ առաջ էր պայմանական-վաղաժամկետ ազատվել: Անձամբ դեռ որեւէ հանցանք չէր գործել: Ցանցն էր գցել պատանիներին ու նրանց ձեռքով էր «կրակից շագանակ հանում»:

Քրեական օրենսգրքի 165 հոդվածում (անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը) ասվում է՝ տասնութ տարին չլրացած անձին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը պատժվում է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկմամբ:

Պատանիներին հանցանքի կատարմանը ներգրավված Հայկ Մխիթարյանին հասանելիք պատժաչափը կորոշվի դատարանում: Նա կենթարկվի համապատասխան քրեական պատասխանատվության, իսկ, ա՛յ, պատանիների ծնողների պատասխանատվությունն առավել մեծ է լինելու. նախաքննություն, դատաքննություն փուլերից հետո նրանց հսկողությանն են հանձնվելու զավակները, որոնք, ցավոք, արդեն խախտել են «չի կարելի»-ի սահմանը:

Գողությունների փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բացահայտում են Տավուշի ոստիկանները

Հունվարին Տավուշի մարզի Բերքաբեր գյուղում գողություն էր կատարվել: Առանձնատներից մեկից գողացել էին 4500 դոլար, 100 եվրո, ոսկյա զարդեր եւ 400-500 լիտր տնական օղի:

Դեպքի առթիվ հունվարի 27-ին հարուցվել էր քրեական գործ:

Ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ Իջեւանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում գողությունը բացահայտվեց: Գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Իջեւանի բաժին բերման ենթարկվեց Բերքաբեր գյուղի բնակիչ Նելսիկ Աբազյանը: Նա ներկայացվեց Տավուշի քննչական մարզային վարչություն:

Պարզվեց, որ հունվարի 15-ի կեսգիշերին Նելսիկ Աբազյանն ընկերոջ՝ Աչաջուր գյուղի

բնակիչ Գագիկ Ալավերդյանի հետ մտել են Աբազյանի հարեւանի առանձնատուն: Գողացել էին ոսկեղեն, փող եւ 22-լիտրանոց երկու տարա տնական օղի: Տարաները մեջ-մեջ էին արել, իսկ ոսկեղենը հաջորդ օրը վաճառել էին մայրաքաղաքի ոսկու շուկաներից մեկում:

Օգտվելով տանտերերի բացակայությունից՝ որոշել էին կրկին մտնել նույն առանձնատունն ու հափշտակել նկուղում պահվող օղին ու այլ խմիչքներ:

Հունվարի 20-ի կեսգիշերին հյուրասենյակից գողացել էին կոնյակներ, վիսկիներ, իսկ նկուղից՝ 2 հատ 10 եւ 9 հատ 22-լիտրանոց տնական օղի: Տարել էին նաեւ դանակների հավաքածու, մազերի հարդարանք: Հաջորդ օրը օղին վաճառել էին: Օղու եւ ալկոհոլային խմիչքների ընդհանուր արժեքը շուրջ 1 միլիոն 300 հազար դրամ էր:

Նելսիկ Աբազյանի տան խուզարկությամբ հայտնաբերվեց գողոնի մի մասը: Տան տարբեր հատվածներից հայտնաբերվեցին նաեւ 31 գրամ չորացված ու մանրացված կանեփանման զանգվածներ:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Երբ վեճն անխուսափելի է

Տավուշի մարզի Հովք գյուղում ապրող հայր եւ որդի Աղաջանյանները ոչ բոլոր հարցերում էին միակարծիք: Այդ պատճառով երբեմն վիճում էին:

Հոր ու որդու հերթական վեճը չուշացավ: Հայրը՝ Համլետը, որդուն՝ Կարենին կարգի հրավիրելու համար խփեց նրա դեմքին: Տեսնելով, որ որդին շարունակում է վիճել, փայտով խփեց գլխին, ոտքերին: Մթնոլորտը շիկացավ, եւ Կարենը հարվածեց հորը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում հայր եւ որդի բացատրություններ տվեցին: Նշանակվեցին նաեւ դատաբժշկական փորձաքննություններ: Կարենին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով, իսկ Համլետի վնասվածքները թեթեւ վնասի հատկանիշներ չէին պարունակում:

Հոր եւ որդու հաշտության հիմքով քրեական գործի հարուցումը մերժվել է:

* * *

Դիլիջանցի Արամայիս Գեւորգյանը նշում էր ծննդյան 80-ամյա հոբելյանը: Շնորհավորելու էին եկել բարեկամները, հարեւանները... Թոռը՝ Գեւորգը, ապրում էր Երեւանում՝ մորից ու խորթ հորից առանձին: Գեւորգը երբ խմում էր, անկառավարելի էր դառնում: Նրա այդ հատկանիշի մասին տեղյակ էին շատերը, այդ թվում՝ խորթ հայրը, եւ զգուշանում էին: Իսկ Գեւորգը ձգտում էր մինչ կյանքը դասավորելը մոր ու խորթ հոր հետ համատեղ ապրել, բայց ցանկությունը գլուխ բերել չէր կարողանում: Զրուցել էր նրանց հետ, բայց՝ ապարդյուն: Այդ օրն էլ բացառություն չէր: Սակայն մինչ այդ, պապին ուղղված ոչ մի կենաց բաց չթողեց ու բաժակները մինչեւ վերջ դատարկեց: Հերթական բաժակը խմելուց հետո Գեւորգը խորթ հոր հետ կրկին խոսեց համատեղ ապրելու ցանկության մասին: Մերժումը չուշացավ.

- Երբ ուզում ես այցելիր, բայց մնալ չես կարող:

Վիճեցին: Խորթ հայրն իրենը պնդեց՝ դժգոհելով Գեւորգի հարբեցողությունից: Թեժացած վեճին միջամտեց 80-ամյա պապը: Գեւորգը ինքնատիրապետումը կորցրած՝ խփեց պապին: Միայն ներկաների ջանքերով նա խաղաղվեց:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին:

Գեւորգի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի հատկանիշներով հանցարարք: Պապը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Այց ընկերոջը

Դիլիջան քաղաքի բնակիչ Սահակ Մնացականյանը մտերիմ հարաբերությունների մեջ էր հաղարծինցի Արման Նահապետյանի հետ: Հունվարի 7-ին Արմանը վերստին հյուրընկալվեց նրան: Հանդիպումը «ջերմացրին» ոգելիցով ու «քաղցրացրին» կենացներով: Գրեթե բոլոր կենացները վերաբերում էին ճշմարիտ ընկերությանը: Մի քանի բաժակից երկուսն էլ հարբեցին: Սահակը շարունակում էր ճառել, իսկ Արմանը, ճիշտ է, լուռ լսում էր, բայց միտքը տենդորեն աշխատում էր նրա գրպանի գումարն իրենով անելու ուղղությամբ:

Հերթական բաժակը դատարկելուց հետո, ի վերջո, Արմանը պահը որսաց: Սահակի տաբատի գրպանից վերցրեց 45 հազար դրամը եւ վազնցը: Հետո տուն գնալու որոշում կայացրեց ու հրաժեշտ տվեց:

Սահակը սթափվելուց հետո միայն նկատեց կորուստը եւ անմիջապես կասկածեց Արմանին:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Դիլիջանի բաժնում Սահակ Մնացականյանը հաղորդում տվեց: Գողությունը կատարելու կասկածանքով Արմանը հանգրվանեց ոստիկանությունում եւ խոստովանական բացատրություն տվեց:

Փաստով կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Զվարճալի ամփոփագիր

Որդու գիտությամբ

Ոստիկանություն է զանգել 41-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ իր ընտանիքին պատկանող քոթեջներից գողացել են գազի կաթսաներ:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ հյուրատան քոթեջների դռները բացել են տեխնիկական միջոցների գործադրմամբ, իսկ պատճառված վնասը մոտ 750 հազար դրամի է:

Երեկոյան ահազանգողը ներկայացել է բաժին, ասել, որ հեռախոսազրույց է ունեցել ուրիշ քաղաքում գտնվող որդու հետ, եւ նա հայտնել է, որ կաթսաները, իր թույլտվությամբ, պարտքի դիմաց ապամոնտաժել է հյուրատան հարեւանը:

Մասնավոր հրաձգարան

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ սրունքի հրազենային վերքով բուժօգնության է ընդունվել 19-ամյա երիտասարդ: Նա հայտնել է, որ «տիրի» հրացանով պատահաբար կրակել է իր ոտքին:

Պարզվել է, որ ոչ թե ինքը, այլ ավագ եղբայրն է, իհարկե՝ պատահաբար, օդաճնշիչ հրացանով կրակել եղբոր ոտքին:

Ի վերջո, խիղճը կորցրեց

43-ամյա մի կին զանգել է ոստիկանություն եւ հայտնել, թե ամուսինն իր մասին հոգ չի տանում, տան վարձերը չի մուծում, խնդրում է, որ ոստիկան մոտենա:

Մոտեցել է: Կինը հաղորդում է տվել, որ անցած տարվա հուլիսի 7-ին հայրական տան բակում ինքը նստել է նախկին ամուսնու վարած մեքենան, սակայն նա, իր կամքին հակառակ, մեքենան վարել է իրենց տան ուղղությամբ: Ինքը բացել է ընթացող մեքենայի դուռը եւ փորձել իջնել, սակայն ընկել է եւ ստացել վնասվածք, տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ, խղճալով նախկին ամուսնուն, հայտնել է, թե վնասվածքը ստացել է աստիճաններից ընկնելու հետեւանքով:

Բայց, պարզվում է, որ ամեն բան սահման ունի:

Չորրորդ անգամից

Ոստիկանություն է զանգել 40-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ բակում կայանված «Մերսեդես»-ի հայելիները գողացել են, եւ սա՝ արդեն չորրորդ անգամ:

Կան մարդիկ, որ «չորրորդ անգամից» են հասկանում՝ ոստիկանություն պետք է դիմել «առաջին անգամից»:

Նորթում

21-ամյա մի երիտասարդ, անցած տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, սպանության սպառնալիքներ է հնչեցրել քսանամյա մի աղջկա եւ նրա ընտանիքի հասցեին, նաեւ սպառնացել, թե կհրապարակի նրա մերկ լուսանկարները, այդ պատճառով էլ աղջիկը նրան է տվել իրենց ավտոտնակի բանալին: Երիտասարդն էլ հափշտակել է 11 հազար դոլար եւ 12 միլիոն դրամ: Նույն ավտոտնակում տղան նաեւ քաշել է աղջկա մազերից, մատից հանել ոսկյա մատանին եւ հեռացել:

Աղջիկը նախկինում ոստիկանություն չի դիմել՝ վախենալով տղայի սպառնալիքներից:

Անե՞լ, թե՞ չանել դաջվածք



Վաղուց անցել են այն ժամանակները, երբ դաջվածք կրողները հանցագործ աշխարհի ներկայացուցիչներ էին: Այսօր դաջվածքները ինքնարտահայտման միջոց են: Դաջվածքները նորաձեւ են, հետեւապես որոշ երիտասարդներ նախընտրում են ունենալ գեղեցիկ դաջվածքներ:

Եթե շատ եք ցանկանում ունենալ դաջվածք, ապա մինչ այն կհայտնվի ձեր մարմնի որեւէ հատվածում, դիմեք մասնագետի խորհրդատվությանը, իմացեք ազդեցություններն ու հակացուցումները:

Նախ խորհրդակցեք մաշկաբանի հետ. հնարավոր է՝ ալերգիկ խնդիր ունենաք եւ անկանխատեսելի հետեւանքներ առաջանան: Այնուհանդերձ, եթե որոշել եք աչքի ընկնել գեղեցիկ եւ բարձրորակ դաջվածքով, ապա մի շտապեք, նախ գտեք բարձրակարգ սրահ, որի մասնագետների աշխատանքը տեսել եք:

Կարեւոր է, որ դաջվածք անելը լինի անվտանգ եւ անցավ: Սրահներում նման պրոցեդուրան կատարում են հատուկ դաջիչ սարքով, որը 50-3000 թրթռապատույտ անելով՝ գունավորում է դաջվածքի միջին շերտը: Եթե ամեն ինչ ճիշտ է արված, ապա նման գունավորումը բավական բարձր որակ կունենա: Իսկ ահա, մաշկից դաջվածքներ մաքրելը շատ ավելի բարդ է, քան դաջելը: Այն մաքրելու համար անհրաժեշտ է վիրաբույժի միջամտություն: Դաճախ լազերային սարքի միջոցով են վերացնում: Չի երաշխավորվում, որ սպի չի մնա:

Եթե այս ամենը ձեզ հետ չի պահում դաջվածք անելու մտքից, ապա հիշեք, որ սրահի ընտրությունից բացի, պակաս կարեւոր չէ դաջվածքի պատկերի ընտրությունը: Այդ հարցում ցանկալի է պրոֆեսիոնալի խորհուրդը: Դաճախ այնպիսի թեմաներ են ընտրում, որոնք հետագայում պարզվում է՝ այլ իմաստ ունեն: Եթե մասնագետը խորհուրդ չի տալիս այս կամ այն տարբերակը, համաձայնեք:

Կարեւոր է, թե ինչ ներդաշնակություն կունենա պատկերը ձեր մարմնի հետ: Դրանից է կախված, թե ինքներդ ինչ էսթետիկական հաճույք կստանաք ձեր դաջվածքից:

Պրոֆեսիոնալ մասնագետները ձեր ընտրած պատկերը նկարում են թղթի վրա, հետո տպիչի օգնությամբ այն դաջում են մաշկին: Որոշ մասնագետներ միանգամից նկարում են հենց մարմնի վրա: Մինչ հիմնական գործը սկսելը, ստուգեք, թե ինչպես է դիտվում պատկերը: Այն դաջվածք լինելուց բացի, պետք է նաեւ գեղագիտական ճաշակ ձեւավորի:

Դաջվածք կատարելուց հետո անհրաժեշտ է հատուկ խնամք:

Ուշադիր եղեք, որ դաջվածքն ավարտելուց անմիջապես հետո թրջոց դրվի: Տասներկու ժամից մաշկը նորմալ վիճակ կստանա: Այնուհետեւ մաշկը լվացեք սառը ջրով եւ հակաբակտերիալ օճառով: Նախնական շրջանում արեւայրուքից խուսափեք: Արեւի ուղիղ ճառագայթները վնասում են: Ճիշտ խնամքի դեպքում կպահպանեք դաջվածքի գույների պայծառությունը:

Իսկ լավագույնն այն է, որ հրաժարվեք այդ մոդայիկ, իսկ իրականում՝ անհեթեթ գաղափարից. մարդը գեղեցիկ է իր բնական տեսքով:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ փետրվարի 7-ից 14-ը ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 39 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ մարդուն առեւանգելու, 1-ը՝ մարդուն առեւանգելու եւ խուլիգանության, 1-ը՝ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, 1-ը՝ ավազակության, 1-ը՝ կողոպուտի, 4-ը՝ գողության, 1-ը՝ գողությանը հանցակցելու, 6-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ ապօրինի ձեռնարկատիրության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ կանխամտածված սնանկության եւ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 69 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 107-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 19 դեպք. 3 մարդ զոհվել է, իսկ 19-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Փետրվարի 10-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սայաթ-Նովայի պողոտայի եւ Ալեք Մանուկյան փողոցի խաչմերուկում վրաերթի է ենթարկել 48-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 10-ին Երեւանի Խանջյան փողոցում իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ, ապա մեկ այլ «Օպել» բախվել է «Մերսեդես»-ին, որն էլ հարվածից առաջ գնալով՝ վրաերթի է ենթարկել երեք քաղաքացու. վարորդները տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 11-ին Սեւան-Երեւան ճանապարհին իրար են բախվել «Մերսեդես» մակնիշի երկու ավտոմեքենա. մեքենաներից մեկի 22-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 11-ին «Մերսեդես Վիտո» մակնիշի ավտոմեքենան Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, ընկել ձորը եւ այրվել. 33-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 11-ին «Կիա Սորենտո» մակնիշի ավտոմեքենան Տավուշի մարզի Հաղարծին գյուղում բախվել է կայանված «ՎԱԶ-21053» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-21053»-ի վարորդը տեղում մահացել է:

■

Փետրվարի 12-ին Երեւանի Ամիրյան եւ Սարյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Շեւրոլե» մակնիշի ավտոմեքենա եւ «Հոնդա» մոպեդ. 22-ամյա մոպեդավարը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 11-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արշակունյաց պողոտայում վրաերթի է ենթարկել 18-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի 72-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել 51-ամյա քաղաքացու, որը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

■

Փետրվարի 12-ին Երեւանի Գ. Մահարու փողոցում իրար են բախվել «Օպել» մակնիշի երկու ավտոմեքենա. վարորդներից մեկը եւ չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ մեկը մահացել է:

■

Փետրվարի 12-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սարյան-Թումանյան փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 35-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին Երեւանի Սասունցի Դավթի եւ Լիսինյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Կավասակի» մոտոցիկլ եւ «Մազդա», «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ.մոտոցիկլիստը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին «ՎԱԶ-2109» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Օգանովի փողոցում վրաերթի է ենթարկել 35-ամյա քաղաքացու եւ 5-ամյա աղջկա, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Ն. Սաֆարյան փողոցում վրաերթի է ենթարկել 81-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին «ԳԱԶ-2705» մակնիշի բեռնատարի վարորդը Արտաշատ քաղաքի Իսակովի փողոցում վրաերթի է ենթարկել 12-ամյա տղայի եւ իր ավտոմեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Փետրվարի 12-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում իրար են բախվել «Ֆոլքսվագեն Գոլֆ» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2106»-ի վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Արդյունավետ կանխարգելում

Հանցավորության կանխարգելմանը միտված ծրագրերն, անշուշտ, ծախսատար են, սակայն հանրահայտ ճշմարտություն է, որ ավելի հեշտ ու արդյունավետ է հանցագործության կանխումն ու կանխարգելումը, քան այն բացահայտելը...

Մեծ Բրիտանիայում գործում է «Վերահսկում» ծրագիրը, որը երկրի կառավարությունը որոշել է ընդլայնել պոտենցիալ հանցագործներին հայտնաբերելու նպատակով: Ծրագրի լուսաբանմամբ զբաղվով լրատվամիջոցները նշում են, որ ընդլայնվելու է տեսախցիկներով բնակավայրերի վերահսկման պրակտիկան, տվյալների լայն բազայի, ներառյալ՝ ԴՆԹ-ի տվյալների օգտագործումը, ոստիկանությանը վերապահվելու է «ակնթարթային արդարադատության» լիազորություն եւ այլն:

Ծրագրի նպատակը հանցավորության կանխարգելման աշխատանքների ուղղորդվածության նախանշումն է:

Ծրագրի հեղինակների համոզմամբ՝ հանցագործություններ հիմնականում կատարում են ոչ մեծ թվով մարդիկ, որոնց կարելի է հայտնաբերել ծննդյան պահից: Այդ նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է հայտնաբերել սոցիալապես խոցելի եւ վտանգի խմբին պատկանող երեխաներին: Ելակետային գործոն են համարվում դատապարտված եւ թմրամոլ ծնողները: Անհրաժեշտ է նման երեխաների հետ տարբեր միջոցառումներ անցկացնել, նաեւ մասնագետները այցելություններ կատարեն նրանց տներ:

Բրիտանական կառավարությունը պնդում է, որ հանցավորությունը կանխարգելելու համար անհրաժեշտ է հնարավորինս ընդլայնել ցանցը: Այդ նպատակով ստեղծվելու է դժվար երեխաների տվյալների բազա, որը պարունակելու է տեղեկատվություն նաեւ նրանց ծնողների մասին: Ի դեպ, մամուլի միջոցով ծրագրի իրագործմանը մասնակցում են

նաեւ քաղաքացիները. նրանց համար հատուկ մասնագիտական տեղեկատվություն է հրապարակվում՝ հնարավորություն տալով հայտնել իրենց տնօրինած տեղեկությունները, ցանկության դեպքում մասնակցել որոշակի գործողությունների, նույնիսկ երեխաների ստուգումներ կատարել:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը վստահ է, որ այս ծրագիրը կկանխի դեռահասների հանցագործ դառնալը. քանի որ նրանց հանցամետ վարքի հիմնական պատճառը ծնողների ուշադրության բացակայությունն է կամ անբարենպաստ միջավայրը: Նոր ծրագրով 8-13 տարեկան այն երեխաները, որոնք պոտենցիալ հանցագործ են համարվում, հաշվառվելու են երիտասարդների հարմարվողականության եւ աջակցության բաժանմունքներում, իսկ նրանց տվյալները ներառվելու են տեղեկատվական համակարգի մեջ:

Ծրագրի նպատակներից մեկն էլ կրկնահանցագործներին ուղղելն է: Անգլիայում, օրինակ, գրանցված հանցագործությունների մոտ կեսը կատարում են նախկինում դատապարտվածները: Պատիժը կրելուց հետո նրանց տրվում է հատուկ վկայական: Նրանք պարտավոր են հետեւել համապատասխան կանոնների, որոնց խախտումը սպառնում է երեքամյա բանտարկությամբ, բայց դա արդեն ոչ թե այլընտրանքային, այլ, այսպես ասած՝ լրացուցիչ բանտ է: Իսկ նպատակը մեկն է՝ անհրաժեշտ է ամեն ինչ անել, որ կալանավայրից դուրս գալուց հետո մարդիկ չվերադառնան այնտեղ:

Քաղաքացիներին ինքնապաշտպանական նպատակներով հրազենի ազատ վաճառքի հիմնահարցը շարունակում է օրախնդիր մնալ շատ երկրներում: Որոշ պետություններ ու հասարակություններ կտրականապես դեմ են ինքնապաշտպանության խնդրի նման լուծմանը, այլ երկրներում մասնակիորեն թույլատրված է հրազենի ազատ վաճառքը: Այս պարագայում անառարկելի առաջատարը Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, եւ հենց այդ երկրում էլ արձանագրվում է զանգվածային սպանությունների ամենամեծ թիվը:

Շարունակելի

Դարերանք

1917 թ. Ձմեռային պալատի պահակապետ Նիկոլայ Սավինը կարողացավ մի ամերիկացու վաճառել էրմիտաժը: Ծառայություն կատարելիս Սավինին է մոտենում մի ամերիկացի եւ կոտրտված ռուսերենով հայտնում, որ ցանկանում է գնել ցարական պալատը՝ նպատակ ունենալով այն քանդել եւ մասմաս տեղափոխել ԱՄՆ: Սավինը իրեն չի կորցնում եւ հայտնում է, որ ինքը կալվածքի տիրոջ ներկայացուցիչն է եւ անմիջապես համաձայնում է առաջարկությանը: Նրան վճարվում է երկու ճամպրուկ փող, որի դիմաց ամերիկացուն տրվում է սեփականության կեղծ վկայագիր՝ կնքված կոպեկանոցի վրա պատկերված երկգլխանի արծիվով եւ հին բանալիների մեծ կապուկ: Որպեսզի նորաթուխ տերը հանկարծ չփորձի ծանոթանալ իր «սեփականությանը» եւ զբոսնել էրմիտաժում, Սավինը հրամայում է անջատել էլեկտրականությունը՝ պատճառաբանելով, որ չի ցանկանում, որպեսզի ամերիկացին վճարի հավելյալ գումար էլեկտրաէներգիայի համար:

Խաբեությունը բացահայտվում մի քանի օր անց, երբ ամերիկացին բանվորների հետ գալիս է էրմիտաժը ապամոնտաժելու: Հասկանալի է, որ դա չթույլատրվեց: Հետաքրքիր էր նաեւ վկայագրի վերջում արված հավելումը՝ «Հիմարներին ոչ ցանում են, ոչ էլ հնձում»:



Համանման խաբեբայություն կատարեց չեխ Վիկտոր Լյուսթիգը՝ պատմության մեջ ամենահանճարեղ խաբեբան: Նա մշակում էր յուրահատուկ սխեմաներ, ուներ 45 ծածկանուն եւ ազատ խոսում էր հինգ լեզուներով: 50-ից ավելի անգամ ձերբակալվել էր, սակայն բավարար փաստեր չլինելու պատճառով ազատ էր արձակվել: Իր գոյությունը «պահպանում էր» թղթախաղով, որի մեջ մասնագիտացել էր, կարողացել էր վաճառել դոլար «արտադրող» մի քանի մեքենա, խաբել ամերիկյան մաֆիայի հզոր ներկայացուցիչ Ալ Կապոնեին, սակայն նրա գլուխգործոցը Փարիզի էյֆելյան աշտարակի «վաճառքն» էր: 1925 թ. գտնվելով Փարիզում՝ թերթերից տեղեկանում է, որ էյֆելյան աշտարակը կարիք ունի շտապ նորոգման: Նրա գլխում տեղնուտեղը հասունանում է նոր խաբեբայություն՝ ինքն իրեն «նշանակում է» Ֆրանսիայի փոստի եւ հեռագրատան նախարարության ղեկավարի տեղակալ, բնակություն հաստատում մայրաքաղաքի թանկարժեք հյուրանոցում եւ կեղծ դրոշմաթղթի վրա 6 «պաշտոնական» նամակ է ուղարկում մետաղի ջարդոն գնող անձանց հասցեներով: Նամակում գործարարներին հայտնում է, որ կառավարությունը ցանկանում է քանդել աշտարակը եւ փակ աճուրդում վաճառել: Հորդորում էր տեղեկությունը չհրապարակել, քանի որ դա ֆրանսիացիների շրջանում հուզումներ կառաջացնի: Ի վերջո, բանակցություններից հետո աշտարակի տերը դառնում է Անդրե Պուասոնը, որը վճարում է 250 հազար ֆրանկ: Լյուսթիգը գումարը ստանալուց հետո մեկնում է Վիեննա: Ինչպես խաբեբայի գրեթե բոլոր զոհերը, այնպես էլ Պուասոնը չի դիմում ոստիկանություն. չէր ցանկանում հայտնվել հիմարի դերում ու խայտառակվել:

Լյուսթիգը փորձում է երկրորդ անգամ վաճառել աշտարակը, սակայն զոհը դիմում է ոստիկանություն, եւ նա ստիպված էր փախուստի դիմել եւ ապաստանել ԱՄՆ-ում, որտեղ սկսում է տպել կեղծ փողեր: Ի վերջո, խաբեբա-դրամանենգը ձերբակալվում եւ դատապարտվում է 20 տարվա բանտարկության. Ալկատրաս տխրահռչակ բանտում էլ մահանում է:

Ամերիկացի Ջորջ Փարքերը մասնագիտացել էր Բրուքլինի կամրջի վաճառքի մեջ: Ճարպիկ խաբեբան կամուրջը վաճառում էր շաբաթը երկու անգամ: Չնայած քսան տարեկան էր, սակայն արագ կողմնորոշվում էր, ամբոխի մեջ կարողանալում էր ընտրել հարուստ զբոսաշրջիկի: Երբ ընտրությունն արվում էր, խաբեբան մոտենում էր ապագա զոհին, ներկայանում որպես կամրջի տեր եւ առաջարկում էր տեղադրել պահակակետ՝ կամրջով անցնողներից վճար գանձելու համար: Ի վերջո, առաջարկում էր 50 հազար դոլարով գնել կամուրջը, նույնիսկ փողը մասմաս վճարելու պայմանով: Հետաքրքիրն այն էր, որ գնորդները կանոնավոր ուղարկում էին պայմանավորված գումարը: Ջորջ Փարքերի խաբեբայությունը բացահայտվեց երեսուն տարի անց: Այդ ընթացքում ոստիկանների համար սովորական էր դարձել պահակակետ դնելու փորձ անող զբոսաշրջիկներին քշելը: Ի վերջո, մեքենայությունը բացահայտվում է, եւ Փարքերը դատապարտվում է ցմահ բանտարկության եւ մինչեւ իր մահը՝ 1936 թ., վայելում էր բանտարկյալների հարգանքը: Ճարպիկ խաբեբայից հետո ամերիկացիների շրջանում տարածվեց «Դու, ի՞նչ է, մտածում ես՝ ես վաճառքի համար կամո՞ւրջ ունեմ» թեւավոր խոսքը՝ ուղղված միամիտ մարդկանց:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Օրինահարգության խնդիր

Մթնշաղ էր: Երեւան-Գյումրի ճանապարհով ընթացող մեքենաները հապուկենտ էին: Դա, թերեւս, «լուրջ» պատճառ էր, որ կարգապանցության հակում ունեցող վարորդները գերազանցեն սահմանված արագությունը: Հունվարի 21-ի երեկոյան հանրապետության ճանապարհներին հայտնված վարորդներից քանի՞սը խախտեցին երթեւեկության կանոնները: Համենայնդեպս, նրանցից մեկն առանձնացավ:

Գյումրի փանող ճանապարհով սլացող «Օպել»-ի վարորդն ընթացքի թափը կոտրեց ընդամենը մի պահ, հետո սլացավ, չէ, փախավ պատահարի վայրից: Մտածեց՝ վրաերթ կատարած մեքենան ոստիկանությունում կգրանցվի որպես անհայտ մակնիշի ու պետհամարանիշի: Փախավ՝ անօգնական թողնելով վրաերթի ենթարկված տղամարդուն:

Իսկ մենք պատահարի վայրից փախուստի դիմող վարորդի արարքը փորձենք այլ տեսանկյունից դիտարկել: Վրաերթ կատարած վարորդը, որպես մարդ, որպես քաղաքացի, պարտավոր է օգնություն ցույց տալ տուժածին, նրան չթողնել անօգնական վիճակում եւ լքել պատահարի վայրը: Հակառակը տմարդի քայլ է, որովհետեւ, ըստ վիճակագրության, ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածների 15-20 տոկոսի վնասվածքներն են անհամատեղելի լինում կյանքի հետ, մնացած 80-85 տոկոսի դեպքում հնարավոր է փրկել տուժողի կյանքը, եթե ժամանակին բժշկական օգնություն ցուցաբերվի: Այսինքն, մարդկային գործոնն այս դեպքում կարող է կյանք արժենալ:

Հունվարի 21-ի ուշ երեկոյան տեղի ունեցած վրաերթի մասին ահազանգը ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հնչեց դեպքից 10-15 րոպե անց: Պատահական քաղաքացի էր զանգել:

Ոստիկաններն ու «շտապօգնության» բրիգադը պատահարի վայր հասան միաժամանակ: Վրաերթի ենթարկվածը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացավ. արնաքամ էր եղել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեպքից հինգ օր անց, վրաերթ կատարելու կասկածանքով, Արագածոտնի մարզի բնակիչ Արտակ Մխիթարյանը բերման ենթարկվեց ոստիկանություն: Խոստովանեց. ապացույցներն անհերքելի էին, նաեւ հիմնավորվեցին դատատեխնիկական փորձաքննությամբ:

«Արագ էի քշում, չհասցրի արգելակել»,- արդարացումը սա էր: Բայց կարող էր տուժածին անմիջապես հիվանդանոց հասցնել, եւ մարդու կյանքը կփրկվեր: Սա որեւէ արդարացում չուներ. փախել էր հույսով, որ չի հայտնաբերվի:

Հայտնաբերվեց, ու հիմա պատիժը քրեական օրենսգրքի երկու հոդվածներով է՝ 242 եւ 244:

Հունվարի 31-ին անհայտ մեքենայի վարորդը մայրաքաղաքի Բաղրամյան պողոտայի եւ Երզնկյան փողոցի խաչմերուկում վրաերթի ենթարկեց 64-ամյա քաղաքացու եւ պատահարի վայրից դիմեց փախուստի: Մարմնական վնասվածքներ ստացած քաղաքացին տեղափոխվեց հիվանդանոց: Ու մինչ բժշիկները պայքարում էին նրա կյանքի համար, ոստիկանները միջոցառումներ էին ձեռնարկում վրաերթ կատարած վարորդի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Քրեական օրենսգիրքը պատահարի վայրից փախուստի դիմելը դիտում է որպես առանձին հանցանք. պատիժ է սահմանում 244 հոդվածը:

Պարզվեց, որ վրաերթը կատարվել էր «Մերսեդես» մակնիշի մեքենայով: Հետագա միջոցառումներով պարզվեց նաեւ վարորդի ինքնությունը՝ Երեւանի բնակիչ Կարեն Սանասարյանն էր: Բացատրական աշխատանքների շնորհիվ նա ներկայացավ ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունք:

Փաստով քննություն է կատարվում:

Ոստիկանության օպերատիվ ամփոփագրերում ճանապարհատրանսպորտային պատահարների մասին հաղորդագրություն ամեն օր կա: Ճանապարհային երթեւեկության կանոններն անտեսող վարորդների, ինչու չէ, նաեւ հետիոտների օրինահարգության մասին պատկերացումները պետք է փոխվեն:

Միայն այդպես կարող է փոխվել մտահոգիչ վիճակագրությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Մարտկոցի գործ» էին անում

Հունվարին ոստիկանության Նաիրիի բաժին անձնական ունեցվածքի գողությունների վերաբերյալ ահազանգեր հնչեցին: Ոստիկանություն էին դիմում Եղվարդ քաղաքի տարբեր թաղամասերի բնակիչներ: Հայտնում էին, որ բակում կայանված մեքենաների մարտկոցները գողացել են: Նույն բովանդակությամբ ահազանգեր էին հնչում նաեւ ոստիկանության տարածքային այլ ստորաբաժանումներում:

Տեղի ոստիկանները ձեռնարկեցին տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հատուկ ուշադրություն դարձվեց գիշերային շրջիկ ծառայության ակտիվացմանն ու շենքերի բակերում կազմակերպվող դարանակալումներին: Օպերատիվ աշխատանքն արդյունք տվեց: Քրեական հետախույզների տեսադաշտում հայտնվեցին երեք անձինք, որոնք Երեւանի բնակիչներ են:

Արարատ Մանուկյանը, Կարապետ Վարդանյանն ու Կարեն Շմավոնյանը հայտնաբերվեցին եւ, ավտոմեքենաների մարտկոցներ գողանալու կասկածանքով, բերման ենթարկվեցին ոստիկանության Նաիրիի բաժին: Խոստովանեցին, որ Եղվարդում վեց մարտկոց են գողացել:

Հետագա միջոցառումներով հիմնավորվեց, որ հանրապետության տարբեր վարչական տարածքներում էին «մարտկոցի գործ» արել. բակերում կայանված մեքենաներից գողացել էին վաթսունհինգ մարտկոց:

Ոստիկանության Նաիրիի բաժնում հարուցված քրեական գործերն ու բերման ենթարկվածները ներկայացվել են քննչական բաժին:

Դեպքերի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԴՊԱՀ Տանիպուրդ

Մեքենաների պարտադիր ապահովագրության համակարգի նպատակն է՝ փոխհատուցել վթարի ենթարկված մեքենայատիրոջ կրած նյութական վնասը: Սակայն պարզվում է, որ այս համակարգը եւս զերծ չէ խարդախումից: Այդպիսի փաստով քրեական գործ է հարուցվել ոստիկանության Կումայրիի բաժնում:

«Մերսեդես»-ը, զարմանալի զուգադիպությամբ, 2017 թ. մեկ անգամ, 2018-ին՝ երկու անգամ, այսպես ասած, վթարի էր ենթարկվել Գյումրիի նույն փողոցում: Մեքենան ապահովագրված էր, բայց 2017 թվականի վթարի հետեւանքով վնասված մեքենայի նորոգման համար փոխհատուցում չէր վճարվել: Բանն այն է, որ վթարված մեքենան ապամոնտաժվել էր մինչ ընկերության փորձագետի ուսումնասիրություն կատարելը, ինչի պատճառով պատճառված նյութական վնասի փոխհատուցումը մերժվել էր:

2018-ի հունիսի 11-ին նույն «Մերսեդես»-ն իրակա՞ն հանգամանքներում էր նույն փողոցում երկրորդ անգամ վթարի ենթարկվել, թե՞ զայրացած փոխհատուցման մերժումից՝ վարորդը որոշել էր հասնել ընկերությունից գումար ստանալու նպատակին եւ վթարը բեմականացրել էր: Նրան այս անգամ վճարվել էր 810 հազար դրամ փոխհատուցում:

Օգոստոսի 26-ին դարձյալ նույն փողոցում նույն մեքենան բախվեց «ՎԱԶ» մակնիշի մեքենայի՝ վնասելով դռները եւ անվաթափքը: Վթարի հանգամանքները, սակայն, հարուցեցին ապահովագրական ընկերության կասկածները, ինչի համար էլ ոստիկանություն հաղորդում տվեց:

Հետաքաքանական փորձաքննության եզրակացությամբ՝ մեքենայի վնասված դետալների վնասվածքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանց գերակշիռ մասը նշված պատահարի հետեւանքով չեն առաջացել: Ուստի ընկերությունը պահանջել էր, որ քրեական գործ հարուցվի եւ մեղավոր անձինք քրեական պատասխանատվության ենթարկվեն:

Նախաքննությունն ընթացքի մեջ է:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Դանակահարություն Վարդենիսում

Հունվարի 26-ին, ժամը 22.10-ին, հիվանդանոցից ոստիկանության Վարդենիսի բաժնում հաղորդում ստացվեց, որ որովայնի առաջնային պատի կտրած-ծակած թափանցող վերքով բուժօգնության է տեղափոխվել մի տղամարդ:

Ոստիկանության Վարդենիսի բաժնի եւ ռազմական ոստիկանության բաժնի ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզեցին, որ հունվարի 26-ին, ժամը 18-ի սահմաններում, Վարդենիսի ռեստորանային համալիրներից մեկում տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում Հայկ Հ.-ն դանակով խփել է տղամարդուն՝ պատճառելով վնասվածք:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գողություններ ավտոլվացման կետերում

Այսօր հանրապետությունում քիչ չեն ինքնասպասարկվող ավտոլվացման կետերը: Շատերը գործում են շուրջօրյա: Սարքավորումներից ու դրամարկղերից օգտվողների վրա ոչ մի վերահսկողություն չկա, հանգամանք, որից հանցամիտներն օգտվել էին:

Վերջին ամիսներին, միայն Արագածոտնի մարզում, ավտոլվացման կետերից գողության վեց դեպք էր արձանագրվել: Տուժողներից ոմանք հաղորդում էին տվել, ոմանք՝ ոչ: Ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները համալիր որոնողական միջոցառումներ էին ձեռնարկում: Շուտով օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ քրեակատարողական հիմնարկից վերջերս ազատված Հրայր Հարությունյանը գողություններ է անում:

Հունվարի 9-ին Գյումրի քաղաքի բնակիչ Հարությունյանը բերման ենթարկվեց ոստիկանության Թալինի բաժին:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ Հրայր Հարությունյանը, դեկտեմբերի 7-ին, գյումրեցի Անդրանիկ Խլղաթյանի հետ, Արագածավան գյուղի ավտոլվացման կետի մետաղադրամների արկղը կոտրելով՝ գումար են հափշտակել: Ժամեր անց Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղի ավտոլվացման կետից էին գողություն արել: Եվ սա ամենը չէր: Նույն եղանակով դեկտեմբերի 11-ին երեք գողություն էլ Թալինում էին արել, մի քանի օր անց երկու գողություն՝ Աշտարակում: Ագարակ գյուղի ավտոլվացման կետից էլ էին փորձել գողություն անել, բայց գործն ավարտին հասցնել չէր հաջողվել:

Հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Չոշ չդառնալու վճռականություն

Սկիզբը՝ էջ 1

Մարդկանց թրաֆիքինգը ոչ թե մեկ հանցավոր արարք է, այլ միասնաբար իրականացվող անօրինական գործողությունների ամբողջական շարք: Թրաֆիքինգի հետեւանքով կեղծվում են փաստաթղթեր, անձինք ապօրինաբար հատում են պետության սահմաններ եւ իրականացվում են այլ հանցավոր գործողություններ:

Թրաֆիքինգ նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրել, տեղափոխել, փոխանցել, թաքցնել, պահել կամ ստանալ, որն իրականացվում է հետեւյալ հակաօրինական ձեւերով՝ ուժ գործադրելով կամ դրա գործադրման սպառնալիքով կամ հարկադրանքի որեւէ այլ ձեւի կիրառմամբ, մարդուն առեւանգելով կամ խաբեությամբ, խարդախությամբ համոզելով, պաշտոնական դիրքը կամ իշխանությունը չարաշահելով, մարդու խոցելի վիճակից օգտվելով, մարդու նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձի (ծնողի, որդեգրողի կամ նրա ղեկավարի) հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով վճարելու, կաշառք տալու կամ դրանք խոստանալու ճանապարհով:

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը դասվում է լատենտային հանցագործությունների շարքին, ընդ որում՝ խոսքը բնական լատենտայնության մասին է, երբ զոհը տարբեր պատճառներով (օրինակ, թրաֆիքինգի վիճակում գտնվելուց ամաչելը, շահագործողների սպառնալիքները) չի դիմում իրավապահ մարմիններին: Բայց կա եւս մի կարեւոր հանգամանք. թրաֆիքինգի որոշ զոհեր չեն դիմում իրավապահ մարմիններին՝ վախենալով, որ իրենք եւս կենթարկվեն քրեական պատասխանատվության, քանի որ նույնպես խախտել են օրենքի որոշ պահանջներ (օրինակ՝ կեղծ փաստաթղթով պետական սահմանը հատելը):

Մի շարք երկրներում մարդու թրաֆիքինգի դեմ տարվում է կանոնակարգվող պայքար՝ մասնագիտական ուղղվածություն ունեցող իրավապահների կողմից: Մեր երկիրը դասվում է այդ շարքին: Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կազմում գործում է թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը: Հիմնախնդիրը մեր իրավապահների ուշադրության կենտրոնում է, իսկ երեւույթի դեմ պայքարը մշտական է ու այլ երկրների իրավապահ կառույցների հետ համագործակցված:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումների շնորհիվ 2018 թ. մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման փաստի կապակցությամբ հարուցվել է 9 քրեական գործ: Սեռական շահագործման մի դեպքը կատարվել է Թուրքիայում: Այդ դեպքով տուժողը զուգահեռ ենթարկվել էր նաեւ աշխատանքային շահագործման: Հարուցված քրեական գործը նախաքննության փուլում է:

Մեր հայրենակցի նկատմամբ աշխատանքային շահագործման մեկ դեպք էլ կատարվել է Ռուսատանի Դաշնությունում: Չորս դեպքերը ներքին շահագործման են. մեկ դեպքով քրեական գործն ուղարկվել է դատարան, երեքով նախաքննություն է կատարվում:

2018 թ. հարուցված քրեական գործերով հայտնաբերվել եւ տուժող է ճանաչվել 28 անձ, որոնցից երկուսը անչափահաս են, երեքը՝ կին: Չորս անձ ներգրավվել է որպես մեղադրյալ: Սա՝ քրեական օրենսգրքի 132 եւ 132.2 հոդվածներով հարուցված քրեական գործերի մասով:

Քրեական օրենսգրքի 261 (շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը) եւ 262 (պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը) հոդվածների հատկանիշներով 2018 թ. բացահայտվել է հանցագործության 16 դեպք:

Հանցագործության հակազդմանն ուղղված միջոցառումների շրջանակում ոստիկանության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով միջազգային հետախուզում է հայտարարվել քսաներկու անձի նկատմամբ: Նրանց հայտնաբերելու ուղղությամբ առավել ակտիվ համագործակցություն է իրականացվում Իրաքի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Խորվաթիայի, Բելառուսի Ինտերպոլի ԱԿԲ-ների հետ:

Մարդու թրաֆիքինգի տեսանկյունից մեր երկիրը հիմնականում սկզբնաղբյուր երկիր է, այսինքն՝ զոհերը հավաքագրվում են Հայաստանում եւ տեղափոխվում այլ երկրներ, որտեղ էլ ենթարկվում են շահագործման: Սեռական շահագործման առումով Հայաստանի համար նպատակամետ երկրներ են Թուրքիան եւ Արաբական Միացյալ Էմիրությունները, աշխատանքային շահագործման համար նպատակամետ երկիր է Ռուսաստանի Դաշնությունը: Արձանագրվում են նաեւ ներքին թրաֆիքինգի դեպքեր: Օրինակ, վերջին տասը տարիներին Հայաստանում բացահայտվել է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հարյուրից ավելի դեպք, տուժող է ճանաչվել մոտ երկու հարյուր մարդ (2008-2015 թթ. վիճակագրությամբ՝ 102 դեպք, 173 տուժող):

Բերենք 2018 թ. հայտնաբերված ներքին թրաֆիքինգի մեկ օրինակ: Ոստիկանությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Երեւանում գործող ռեստորաններից մեկում աշխատանքային շահագործման են ենթարկվում ազգությամբ հնդիկ աշխատակիցներ: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ ռեստորանի սեփականատերը Հնդկաստանի քաղաքացի է եւ բացակայում է Հայաստանից: Ռեստորանի վարձակալը բարձր աշխատավարձով աշխատանքով ապահովելու կեղծ խոստումներով Հնդկաստանում հավաքագրել, այնուհետեւ կազմակերպել էր նրանց տեղափոխումը Հայաստան, որտեղ արդեն խաբեությամբ վերցնելով անձնագրերը եւ օգտագործելով նրանց վիճակի խոցելիությունը, ինչը պայմանավորված էր ճանապարհածախսի վճարմամբ առաջացած ուռճացված պարտքով, նաեւ լեզվին չտիրապետելու եւ տեղանքին ծանոթ չլինելու հանգամանքով, ստիպել էր իր վարձակալած ռեստորանում առանց վարձատրության կատարել տարաբնույթ աշխատանքներ:

Հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Շարունակելի

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թվիթերյան բացահայտումներ

Սկիզբը՝ էջ 1

Փետրվարի 9-ին թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները Էրեբունի համայնքում հայտնաբերեցին Կարեն Մանուկյանին, Իրանի քաղաքացիներ Մոհմմադ Թաբարսիին ու Շահաբոլլահ Ռավեշինին:

Երեւանի բնակիչ Կարեն Մանուկյանը իրավապահներին ներկայացրեց ափիոն թմրամիջոց: Մոհմմադ Թաբարսիի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին 70 գրամից ավելի հերոին եւ մետամֆետամին թմրամիջոցների զանգվածներ: Տաքսիի մեջ, որով շրջել էր Մոհմմադ Թաբարսին, նույնպես մետամֆետամին հայտնաբերվեց: Իրավապահները խուզարկեցին նաեւ Թաբարսիի վարձակալած բնակարանը, որտեղ հայտնաբերվեցին կոկաին թմրամիջոցի նմանվող զանգվածներ: Շահաբոլլահ Ռավեշինի խուզարկությամբ եւս հայտնաբերվեցին՝ ափիոնի, հաշիշի եւ հերոինի զանգվածներ:

Հարուցված քրեական գործի շրջանակներում ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները խուզարկեցին Շահաբոլլահ Ռավեշինի վարձակալած շինությունը: Հայտնաբերվեցին մետամֆետամին եւ ափիոն թմրամիջոցների նմանվող զանգվածներ ու ծխելու հարմարանք:

Ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, շարունակելով իրացնել օպերատիվ տեղեկությունները, փետրվարի 9-ին Ավանի Դուրյան թաղամասում հայտնաբերեցին ու ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկեցին 35-ամյա Առնո Մկրտչյանին ու 37-ամյա Արմեն Կիրակոսյանին, կասկածանքը՝ թմրամիջոց պահել եւ օգտագործել: Բերման ենթարկելու ընթացքում Առնո Մկրտչյանի վարած մեքենայի սրահից փոպրակ էր դուրս նետվել: Տարածքի զննությամբ հայտնաբերված փոպրակում մետամֆետամին թմրամիջոցի նմանվող զանգված էր: Մկրտչյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին մեթադոնի հաբեր ու ծալովի դանակ:

Ապօրինի թմրաշրջանառության շղթան այսքանով չսահմանափակվեց: Փետրվարի 11-ին ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները Էրեբունու բաժին բերման ենթարկեցին ազգությամբ հայ, Իրանի քաղաքացի, 56-ամյա մի տղամարդու: Քրեական հետախույզների փվյալներով՝ նա եւս զբաղվում է ապօրինի թմրաշրջանառությամբ: Բերման ենթարկվածը իրավապահներին ներկայացրեց աղով լցված փարա, որի մեջ թաքցված էր պոլիէթիլենային փոպրակներով փաթեթավորված երկու զանգված, որոնք, ըստ նրա՝ մետամֆետամին թմրամիջոցներ են:

Ապօրինի թմրաշրջանառության փաստերով քրեական գործեր են հարուցվել: Հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են՝ դեպքերի բոլոր հանգամանքները պարզելու եւ նոր հանցադրվագներ բացահայտելու ուղղությամբ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայելիներ էին գողանում

Վերջին օրերին ոստիկանության Արաբկիրի բաժնում ավտոմեքենայի կողային հայելիների գողության ահազանգեր էին ստացվում: Թիրախում էին, մասնավորապես, «Մերսեդես Բենց» մակնիշի նոր ու թանկարժեք մոդելները, որոնց միայն զույգ հայելու գինն անցնում է 1 միլիոն դրամը:

Փետրվարի 8-ին ստացվել էր «Էս» դասի «Մերսեդես»-ի կողային հայելիների գողության վերաբերյալ երկու հաղորդում: Դեպքի վայրերից մեկը՝ Կոմիտասի, մյուսը Դրաչյա Քոչարի շենքերի մոտ էր: Ավելի վաղ՝ փետրվարի 4-ին, հաղորդում էր ստացվել, որ գիշերը գողացել են Բաղրամյան պողոտայի մի շենքի բակում կայանված «Մերսեդես»-ի կողային հայելիները:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզների՝ հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները շարունակվում էին: Ուսումնասիրվում ու շուրջօրյա դիտարկման էին առնվում տեսադաշտում գտնվող հնարավոր կասկածյալները:

Փետրվարի 9-ին Արաբկիրի քրեական հետախուզության բաժանմունքում ստացվեցին գողության վերաբերյալ հերթական օպերատիվ տեղեկությունները: Գիշերը, ժամը 3-ի սահմաններում, գողացել էին Դարավարեւմտյան թաղամասի Բաբաջանյան փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Օպել»-ի հաշվառման համարանիշերը: Համագործակցելով ՊՊՄ գնդի 2-րդ գումարտակի ծառայողների հետ՝ Արաբկիրի ոստիկանները, գողություն կատարելու կասկածանքով, Կոմիտասի պողոտայից բաժին բերման ենթարկեցին 21-ամյա Էրիկ Տոնոյանին, 19-ամյա Վահե Ավետիսյանին եւ 23-ամյա Հայկ Սահակյանին:

Բաժնի հատուկ պահպանվող տարածք տեղափոխվեց նաեւ Էրիկ Տոնոյանի վարած «Նիվա»-ն, որի վրա տեղադրված էին գողացված համարանիշերը:

Պարզվեց, որ հունվարից փետրվարի 8-ն ընկած ժամանակահատվածում Էրիկ Տոնոյանն ու Վահե Ավետիսյանը գողացել էին տասը ավտոմեքենայի կողային հայելիներ: Դանցադրվագներից մեկում նրանց հետ էր եղել նաեւ Հայկ Սահակյանը:

Իրականացված միջոցառումներով պարզվեց նաեւ, որ Վահե Ավետիսյանը հարուցված մեկ այլ քրեական գործի շրջանակում ներգրավված է որպես մեղադրյալ, եւ ոստիկանության Մասիսի բաժնի կողմից գտնվում է հետախուզման մեջ:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Դպիր / Թղթախաղ
Բաթում
Հին հայկ. հարկ / Վիթխարի մարդ
Հույն քանդակագործ / Բայի ժամանակ
Կետադր. նշան / Կիլիկիա
... Լեկո
Կախարդը շշում / Ժակլին ...
«Զայրացած լեռ» / Բաղդադ
Աստղ, կույսի համաստեղ. / «Մանոն», «Վերթեր»
Կերպար / Թռչուն / Մաժոր
Առարկա / Իսրայել ...
Հրացանակիր հերոս
«Հրաժեշտ հայրենիքին»
Հնագույն ծագումով նվագարան
Հնադարյան զենք
Բրդյա կտոր / Ընտրական ձայն
Կալվածք
Խիզախ / Ռուս բանաստեղծ
«Սիդա», գործ. անձ / Նապոլեոնի ծննդավ.
Քսելու յուղ / ... Գեղեցիկ
Մեծ մարգարեներից առաջինը
Մահճակալի գլխավերուը / Կապիկ
Հայ ժող. երգվող քառատող
Ֆրանս. նկարիչ / Ընտիր ձի
Քաղաք, Ուզբեկստան / էգ ոչխար
Դեբեդ / «Իլիական»
Դեմք / H_2O
Ամերիկ. ֆիզիկոս, Նոբել. դափ.
Քաղաք, Պերու
Ոչխարների խումբ
Հայ պատմաբան
Պանդա, կոալա
Ասիական դիցամայր
Վաչկատուն / Բազազ Արտեմի կինը
... դե Ֆյունես
Դրոշմ / Ափսե
Հռոմ. աստվածուհի / Բ
Լատվիայի ժող. գրող
Կզաքիս
Ատրճանակ SS
Հեռախոսի գյուտարար / Խնդրագիր
Հոգեւոր անձանց ժողով
Չամուսնացած Զոհրապ, նովել
Գետ, Չինաստան
Բուժանյութ
Նետերի տուփ
Անտոնիո ... / Շախմատի խաղաքար
... Վենտուրա / Պատմ. մարզ, Վրաստան
Էսպերանտո / Ավազակ
Նիամեյ / Հեռուստաալիք
Մայն ...
Ներոնի ուսուցիչը / Անաստաս ...
Զրահամեքենա
Անապատի չոր քամի / Սենդամբերք
Ճիրան / Մարզիկ
Յուրի ...
Հողային մակերեսի միավոր
Վիկինգ
Թմբուկ, նաղարա / Գրական ժանր
Համալսարան, Փարիզ / Մազերի ներկ
Անգլ. գրող (Վինի Թուխ) / Կտորեղեն
Ֆտոր / Բացվածք պատի մեջ
Երկրաչափական մարմին
Ռուսական ֆուտբ. ակումբ
Մետաքսե գործվածք / Նոտա
Վրացական երգ
...-Գարահիսար
Իտալացի կինոռեժիսոր
«Խաղալիքը», կինոդերասան
Հնդկ. հետեւակ զորք

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 15.02 - 21.02

Խոյ - Գլխավորը զգացմունքները զսպելն է: Բարդ իրավիճակներում դա դժվար է, բայց փորձեք:

Ցուլ - Սիրային հարցերում թեթեւ վեճը չի բացառվում: Մյուս դեպքերում ինչ ձեռնարկեք՝ կհաջողվի:

Երկվորյակ - Եթե ունեք կողակից, ապա հարաբերությունները կամրապնդվեն, եթե միայնակ եք, կգտնեք ձեր երկրորդ կեսին:

Խեցգետին - Հոգեկան հավասարակշռությունն ու կայունությունը կլինեն ձեր ուղեկիցը: Ոչ մի իրադարձություն չի խռովի ձեր հոգին:

Առյուծ - Լարված կլինի շաբաթվա ավարտը. կոնֆլիկտ ընտանիքի անդամի հետ:

Կույս - Իսկական ժամանակն է վաստակած հանգիստը վայելելու համար:

Կշեռք - Շաբաթվա սկիզբը անհաջող կսկսվի, բայց ավարտը մոռացնել կտա այդ մասին:

Կարիճ - Ամուսնացածներին խորհուրդ է տրվում ամրապնդել հարաբերությունները սիրելիի հետ, միայնակներին՝ կոպիտ պահվածքով չվանել երկրպագուներին:

Աղեղնավոր - Ռիսկի մի դիմեք. պարտքով գումար մի տվեք եւ մի վերցրեք:

Այծեղջյուր - Դուք գերհոգնած եք, արդյունքում՝ շատ լարված եք, ինչը կհանգեցնի կոնֆլիկտի:

Ջրհոս - Մի հրաժարվեք երազանքից. հաղթահարեք դժվարությունները եւ կհասնեք ցանկալիին:

Ձուկ - Դուք սովոր եք գործել, հետո մտածել. ժամանակն է ճիշտ հակառակն անելու:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.g1-h2 a7:c5 2.h2:h6x

Խնդիր N2 1.d4-e5 f6:d4 2.f4-g5 h6:f4 3.g3:e5x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 14.02.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: